Գերմանիայի
Դաշնային Հանրապետության
դեսպանություն
Երևան

ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ (§ 20 AufenthG)
միայն Գերմանիայի համար

Վիզայի համար դիմում ներկայացնելը

Դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է նախապես հերթագրվել: Հերթագրվել կարող եք միայն առցանց եղանակով: Առցանց հերթագրման համակարգ կարող եք մուտք գործել դեսպանության կայքի միջոցով. www.eriwan.diplo.de :

- Ոչ գերմանալեզու փաստաթղթերը՝ բացառությամբ անձնագրի տվյալների էջի, պետք է ներկայացնել գերմաներեն հաստատված թարգմանությամբ:
- Վկայականները, դիպլոմները և նմանատիպ փաստաթղթերը պետք է ներկայացնել բնօրինակով և ապոստիլով/լեգալիզացիայով: Բնօրինակները կվերադարձվեն:
- Վիզայի համար հնարավոր է, որ անհրաժեշտ լինի ԳԴՀ աշխատանքի դաշնային գործակալության (Bundesagentur für Arbeit) և համապատասխան վայրի Օտարերկրացիների հարցերով մարմնի (Ausländerbehörde) համաձայնությունը: Վիզան կարող է տրվել միայն, երբ դեսպանությունը ստանա այս համաձայնությունները:
- **Դիմումի քննությունը և մշակումը սովորաբար տևում է 1 – 4 շաբաթ**, առանձին դեպքերում՝ ավելի երկար:
- Ավիատոմսի ամրագրում վիզայի համար չի պահանջվում, խնդրում ենք ավիատոմս ամրագրել միայն վիզա ստանալուց հետո:
- Դեսպանությունն իրեն իրավունք է վերապահում պահանջել լրացուցիչ փաստաթղթեր: Լիարժեք դիմում ներկայացնելը դեռևս բավարար հիմք չէ վիզա ստանալու համար: Ոչ լիարժեք փաստաթղթերը կարող են դանդաղեցնել գործընթացը և հանգեցնել դրանց վերադարձի կամ մերժման: Դեսպանություն ուղարկված այն ֆաքսերը կամ գրությունները, որոնց վրա բացակայում է վիզայի գործի համարը, չեն տեսակավորվում և չեն կցվում գործերին:
- **Խնդրում ենք դիմումի վերոնշյալ մշակման ժամանակահատվածում, ձեռնպահ մնալ դիմումի ընթացքի վերաբերյալ հարցումներ անելուց:** Այդ հարցումները էապես ծանրաբեռնում են վիզայի բաժնի աշխատանքը, այդ պատճառով վիզայի բաժինը չի կարող պատասխանել:
- Վիզայի վճարը կազմում է 75 եվրո, որը վճարվում է դրամով՝ դիմումը հանձնելիս:
- Բոլոր փաստաթղթերը (հատկապես անձնագրի պատճենները) պետք է **ներկայացնել A4 ձևաչափով**՝ առանց ամրացնելու, կարելու և թափանցիկ թղթապանակների:

Սկզբունքորեն բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացնել բնօրինակով և մեկական պատճենով: Խնդրում ենք փաստաթղթերը դասավորել այսպես.

- բոլոր բնօրինակ փաստաթղթերը՝ ստորև նշված հերթականությամբ.

- Դիմում-հարցաթերթիկը՝ հայտարարության հետ միասին, և բոլոր թվարկված փաստաթղթերի ընթեռնելի և ոչ մուգ պատճենները՝ ստորև նշված հերթականությամբ.

Այս հուշաթերթիկի բոլոր տվյալները հիմնված են այն գրելու պահին դեսպանության ունեցած տեղեկությունների և վերլուծությունների վրա, ուստի դեսպանությունը չի կարող երաշխավորել հուշաթերթիկի լիարժեքությունն ու ճշգրտությունը հատկապես ընթացիկ փոփոխությունների պատճառով:

Հասցեն՝
Չարենցի 29
0025 Երևան
ՀՀ

Հեռախոսային խորհրդատվության ժամերը
տեղադրված են մեր կայքում.
https://eriwan.diplo.de/

էլ. փոստի հասցե.
national@eriw.diplo.de

Անհրաժեշտ փաստաթղթեր

- գերմաներենով կամ անգլերենով լիարժեք լրացված դիմում-հարցաթերթիկ՝ ներառյալ Կացության մասին դաշնային օրենքի §54-ով սահմանված իրազեկումը: Հարցաթերթիկը կարող եք գտնել դեսպանության կայքում՝ սույն հղումով. https://videx-national.diplo.de ,
- անհրաժեշտության դեպքում՝ երկու լիարժեք լրացված և ստորագրված հայտարարություն հասանելիության (հղում) վերաբերյալ,
- 2 նոր, բիոմետրիկ լուսանկար, մեկը խնդրում ենք սոսնձել դիմում-հարցաթերթիկներին,
- գործող ճամփորդական անձնագիր, որը վավերական լինի առնվազն 6 ամիս, (անձնագրում պետք է լինի առնվազն երկու դատարկ էջ, իսկ անձնագիրը տրված լինի ոչ ավելի վաղ, քան տասը տարի առաջ),
- անձնագրի այն էջերի պատճենները, որտեղ առկա է կնիք, վիզա կամ որևէ այլ նշում,
- Ապացույցներ **Ձեր կրթության վկայականի ճանաչման մասին**

Միջին մասնագիտական կրթություն ունեցողների դեպքում

- **Միջին մասնագիտական կրթության վկայականի ճանաչման վերաբերյալ տեղեկանք.** Ճանաչման վերաբերյալ գրավոր հաստատում՝ Գերմանիայում մասնագիտության ճանաչման համար իրավասու մարմնից

Բուհավարտ մասնագետների դեպքում

- anabin Datenbank շտեմարանից երկու քաղվածք՝ ավարտական վկայականի և բուհի վերաբերյալ
  կամ (եթե ավարտական վկայականը anabin-Datenbank շտեմարանում գնահատված չէ որպես „entspricht“ կամ „gleichwertig“ և/կամ բուհը՝ որպես „H+“)
- ZAB (Zentralstelle für ausländisches Bildungswesen)-ի գնահատում-եզրակացությունը վկայականի վերաբերյալ
  կամ (այսպես կոչված ռեգլեմենտացված մասնագիտությունների դեպքում, որոնցով աշխատելու համար պահանջվում է թույլտվություն, օրինակ՝ բժիշկներ, ինժեներներ, լիարժեք ցանկը՝ Աշխատանքի դաշնային գործակալությունում՝ Bundesagentur für Arbeit կամ ԵՄ հանձնաժողովում՝ EU-Kommission)
- **Աշխատանքային գործունեություն ծավալելու թույլտվություն՝** տրված իրավասու ճանաչման մարմնից կամ հավաստիացում, որ այդպիսին կտրվի, օրինակ՝ բժշկական մասնագիտությունների համար՝ Դաշնային ապրոբացիոն մարմնի որոշումը, այսինքն՝ կամ աշխատանքային գործունեություն ծավալելու թույլտվության վերաբերյալ նախնական համաձայնությունը կամ արդեն տրված բժշկական ապրոբացիան)

Ճանաչման վերաբերյալ մանրամասները՝ սույն հղումով. www.anerkennung-in-deutschland.de

- Որակավորման վկայականներ, օրինակ՝ բուհի ավարտական վկայական (ներդիրով): Անհրաժեշտ է ներկայացնել:

Այս հուշաթերթիկի բոլոր տվյալները հիմնված են այն գրելու պահին դեսպանության ունեցած տեղեկությունների և վերլուծությունների վրա, ուստի դեսպանությունը չի կարող երաշխավորել հուշաթերթիկի լիարժեքությունն ու ճշգրտությունը հատկապես ընթացիկ փոփոխությունների պատճառով:

Հասցեն՝
Չարենցի 29
0025 Երևան
ՀՀ

Հեռախոսային խորհրդատվության ժամերը տեղադրված են մեր կայքում.
https://eriwan.diplo.de/

էլ. փոստի հասցե.
national@eriw.diplo.de

- Հիմնավորագիր աշխատանք փնտրելու համար նախատեսված ճամփորդության համար: Հիմնավորագրից պետք է բխի, թե որ աշխատանքային ոլորտներով և աշխատատեղերով եք հետաքրքրված, որտեղ եք ցանկանում դիմել և ինչ գիշերակացից եք օգտվելու:
- Եթե ունեք, գերմանական ընկերության հրավերը
- Անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ աջակցող փաստաթղթեր (օր.՝ գործատուից տեղեկանքներ, երաշխավորագրեր և այլն), եթե արդեն այդպիսիք կան, նաև լրացուցիչ տեղեկանքներ՝ աշխատատեղ փնտրելու Ձեր նախապատրաստական քայլերի վերաբերյալ
- Միջին մասնագիտական կրթություն ունեցող մասնագետների համար, որոնց վկայականը **ճանաչվել է՝**
  Գերմաներենի իմացության B1 վկայական՝:
- Աղյուսակային կենսագրություն, որտեղ հատկապես նշված լինեն մասնագիտական գործունեության մանրամասները

- Բավարար ֆինանսական միջոցների վերաբերյալ ապացույց
  <u>Ֆինանսավորում.</u>
  Գերմանիայում կացության համար յուրաքանչյուր դիմումատու պետք է ներկայացնի **ամսական առնվազն 1.027,- եվրո** ֆինանսավորում: Դրա մասին տեղեկանքները (ապացուցելի սեփական միջոցներ, «արգելափակված» հաշվեհամար (Sperrkonto) կամ պաշտոնական պարտավորագիր) պետք է ներկայացվեն դիմումի հետ: Այսինքն՝ վիզայի դիմումը ներկայացնելիս արդեն պետք է հավաստվի **առնվազն 6.162,- €** ֆինանսական միջոցների, ինչպես նաև Գերմանիայից հնարավոր հետդարձի համար պահանջվող միջոցների առկայությունը:
  - **Sperrkonto-ի միջոցով ֆինանսավորման դեպքում.** այս հաշվի տեսակը պետք է բացել **վիզայի դիմումը ներկայացնելուց առաջ**: Դիմումը կարող է ընդունվել բացառապես այն դեպքում, երբ առկա է **հաշվի բացման և հաշվի վրա ամսական հասանելիք գումարի վերաբերյալ պաշտոնական հաստատումը**: Բանկի՝ առանց ամսական գումարների նշման հաստատումը **բավարար չէ**: Հաշվին արված մուտքերի կամ փոխանցումների ապացույցը առանց բանկի հաստատման նույնպես **բավարար չէ**:
  - **Պարտավորագրի** միջոցով ֆինանսավորման դեպքում. պետք է ներկայացնել պաշտոնական պարտավորագրի ձևաթղթով ապացույց (ըստ §§ 66, 68 AufenthG), որը տրված լինի ոչ շուտ, քան վեց ամիս առաջ, և որում որպես կացության նպատակ նշված լինի „Arbeitsplatzsuche“ (աշխատանք փնտրելու նպատակով) , ինչպես նաև արտացոլվեն ֆինանսավորման հիմքերը (Bonität), որոնց միջոցով պարտավորագիր տրամադրող անձը գրավոր կերպով ստանձնում է կացության ծախսերը:

- Այլ՝ ոչ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող անձինք, օրինակ՝ Ռուսաստանի, Իրանի կամ Հնդկաստանի քաղաքացիները իրենց բնակությունը Հայաստանում հավաստելու համար պետք է ներկայացնեն Հայաստանի կացության թույլտվություն՝ ռեզիդենտ քարտ (առնվազն վեց ամսվա):
- Բժշկական ապահովագրություն՝ ըստ ԵՄ նորմերի (վավերականության տարածքը՝ շենգենյան տարածքը ամբողջությամբ, ծածկման նվազագույն գումարը՝ 30000 եվրո, վավերական՝մուտք

Այս հուշաթերթիկի բոլոր տվյալները հիմնված են այն գրելու պահին դեսպանության ունեցած տեղեկությունների և վերլուծությունների վրա, ուստի դեսպանությունը չի կարող երաշխավորել հուշաթերթիկի լիարժեքությունն ու ճշգրտությունը հատկապես ընթացիկ փոփոխությունների պատճառով:

գործելու օրվանից մինչև կացության ավարտը), **որը պետք է ներկայացնել ամենաուշը վիզան ստանալիս:**

Դեսպանությունը հուշում է, որ համաձայն Կացության մասին օրենքի §82–ի՝ յուրաքանչյուր դիմող պարտավոր է ապահովել դիմումի լիարժեքությունը, եթե որևէ փաստաթուղթ բացակայում է, դեսպանությունը համարում է, որ այն չի կարող ներկայացվել:

Ընդհանուր տեղեկություններ

Աշխատանք փնտրելու համար տրվող վիզան հնարավորություն է տալիս օտարերկրյա մասնագետներին, որոնց միջին մասնագիտական կրթությունը կամ բուհական կրթությունը ճանաչված է Գերմանիայում, առավելագույնը վեց ամսով մեկնել Գերմանիա և փնտրել այնպիսի աշխատանք, որը հնարավոր է կատարել ունեցած որակավորմամբ: Եթե կես տարվա ընթացքում Դուք գտնում եք Ձեր աշխատատուին, ապա պարտադիր չէ վերադառնալ. պահանջվող կացության թույլտվությունը Դուք կարող եք ստանալ Գերմանիայում՝ համապատասխան բնակավայրի Օտարերկրացիների հարցերով վարչությունից (Ausländerbehörde): Աշխատանք փնտրելու ժամանակահատվածում թույլատրված չէ աշխատել, բացառությամբ փորձաշրջանի, որը պետք է կազմի շաբաթական առավելագույնը 10 ժամ:

Գերմանիայում ապրելու և աշխատելու մասին հավելյալ տեղեկություններ կարող եք գտնել սույն հղումով.
www.make-it-in-germany.com

Կարևոր ցուցումներ

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքին, որ վիզայի դիմումը հանձնելիս որևէ այլ վճար, քան **դեսպանության շենքում՝ վիզաների բաժնի պատուհանի մոտ** գանձվող վիզայի վճարն է, նախատեսված չէ:

Դեսպանությունը **չի համագործակցում** տուրիստական ընկերությունների հետ: **Դա վերաբերում է նաև դեսպանության անմիջական հարևանությամբ գտնվող գրասենյակներին: Ճամփորդական կամ այլ ծառայություններ մատուցող գրասենյակների աշխատակիցների պնդումներն այն մասին, որ իրենք համագործակցում են դեսպանության հետ, չի համապատասխանում իրականությանը:**

Ոչ ոք չի կարող ազդել Ձեր դիմումի հաջողության հեռանկարի վրա, քանի որ դիմումների վերաբերյալ որոշումները կայացնում է բացառապես գերմանացիներից բաղկացած անձնակազմը: **Եթե Ձեզ այլ բան են խոստանում, ապա Ձեզ փորձում են խաբել: Ոչ մի դեպքում գումար մի՛ տվեք:**

Վիզայի հետ կապված հարցերի մասին արժանահավատ տեղեկություններ կարող եք անվճար ստանալ **դեսպանության վիզաների բաժնի աշխատակիցներից**: Այլ անձինք տեղեկություններ տրամադրելու իրավասություն չունեն:

Այս հուշաթերթիկի բոլոր տվյալները հիմնված են այն գրելու պահին դեսպանության ունեցած տեղեկությունների և վերլուծությունների վրա, ուստի դեսպանությունը չի կարող երաշխավորել հուշաթերթիկի լիարժեքությունն ու ճշգրտությունը հատկապես ընթացիկ փոփոխությունների պատճառով:

Հասցեն՝
Չարենցի 29
0025 Երևան
ՀՀ

Հեռախոսային խորհրդատվության ժամերը
տեղադրված են մեր կայքում.
https://eriwan.diplo.de/

էլ. փոստի հասցե.
national@eriw.diplo.de